

շուած Շէհրի Չէլէպի, Խոճա Սէֆէր եւ Խոճա Գասպար անուններն աւելի այս ժամանակի կը յարմարին, երբ կար Շահին Չէլէպի, եւ արեւելեան (ջուղայեցի) հարուստներ, որոնք «Խոճա» տիտղոսն ունէին, որ յետոյ գրեթէ անհետացաւ իւր Պոլիս: 3. Անտոնեանց Մատենադարանին յիշեալ ձեռագրին կազմը 1655ին նորագուած է, ուստի կրնար յիշեալ թուղթն իբրեւ աւելորդ կողքին գրուիլ: 4. Սաղմոսի մը շատ կարեւոր յիշատակարանը կ'աւանդէ (հակառակ շ. Ասատուրի, էջ 91, եւ այլոց) որ մինչեւ 1633 Զաքարիա Պատրիարք էր. «Գրեցաւ ի թուականիս Հայոց ՌՁԲ (= 1633) ի գիւղաքաղաքս Իւսքիւտարի, ի դուռն սուրբ Կարապետին: Էս տարին Զաքարէ վարդապետն մանուղլ արին ստամպօղլք: Սուրբ Կարապետոյ ՌԲՃ զուռուշ: Իւսքիւտարոյ. քահանայք եւ ժողովուրդք նոր գնեցին զեկեղեցին: Աշխարհ մեծ եւ շատ աղմուկք եղաւ ի մէջ սոցա: Ի թուականիս այսմիկ Կոստանդիանոյ քահանայք եւ ժողովուրդն մահալ եւ արժանի տեսան կեսարացի Գրիգոր վարդապետն զեսպանօք խաւուրեցին բերին Յոհան ոսկեբերան հայրապետին աթոռին արժանի արարին» (Տէրյենց, «Հյստն.», 1847, թ. 27—80), որ եւ վախճանեցաւ 1636ին (Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, Ա. էջ 294, ուր կայ նաեւ Գր. Վ. Կեսարացւոյ կտակը):

Գիտելու է որ Զաքարիա Վանեցւոյ յաջորդը Կարապետ չէր. ոչ 1623ին եւ ոչ 1633ին